ԱՊԾԵՐՈՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻՆ

ՆԻ

ՌՈՒՍԱՑ ՆԱՒԹԸ

ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆԻ

Այժմ այլ ես չեն վախենում քարէածուխի մօտագալ սպառելուց. ժամանակիս ինդուստրիայի պահանջները որքան էլ մեծ լինեն, այժմ գիտենք որ եթէ քարէածուխը պակասելու էլ լինի, ամեն տեսակ ջրածուխներ՝ Անդրկովկասի և Ամերիկայի անքան առատ նաւթերը շատ լաւ կարող են վառելիք ծառայել այլ և այլ շոգեմեքենաների համար։ Այսօր մենք ուզում ենք ուսումնասիրել այդ երկու նաւթերից այն որ Անդրկովկասինն է։

Մի տասնեակ տարիներից դէս երկաթուղով են գնում Բաթումից Թիֆլիս և Բաքու։ Այս վերջին քաղաքում, կայարանից դուրս գալուն պէս՝ մի թուրք կառապան աղդալին հաղուստով մեզ տարաւ Բաքուի Grand-Hôtel. Ես աշխատում էի, քաղաք մտնելուց առաջ, երևակայութեամբ պատկերացնել այն հրաշալիքները, որ շուտով աչքովս պիտի տեսնէի. և ահա ես պատկերացնում էի մի հին պարսկական քաղաք, չահնշահների և սարսափելի խանների տիրապետութեան լեռքեր, լաւիտենական կրակներ և կրակապաշտ գեբրներ. խանի աղջկայ աշտարակը, որտեղից, եթէ պէտք է հաւատալ Դիւմալի պատմածին, մի խանի սիրելի տղջիկը վայր գլորուեց. վերջապէս հազար ու մի աւերակներ, հազար լիշատակներ, նոր անցեալի մնացորդներ, քանի որ Բաքուի վերաշինութիւնը միայն երեկւանից է սկսել, բայց արդէն պատկառելի, որպէս մի սրբազան քաղաքի անցեալ, որպէս Երուսաղեմ կամ Ոլիմպոս։ Աւաղ—ինչ լուսախաբութիւն։

Պարսկաստանից երկու քայլ հեռու, կենտրոնական Ասիայից քսան ու չորս ժամուայ ճանապարհի վրայ, ես գտայ մի նոր քաղաք, լայն փո-

ղոցներով, զարդարուած բաւականի ցածր աներով, որպէս Ռուսաստանում առհասարակ, բայց շատ յարմար և առողջ կարճ ասած՝ սկզբում ես դանդաղանութիւն չէի գտնում Բաքուի, Օդեսայի և Պետերբուրգի մէջ, և, յուսախաբ եղած, ես անիծում էի քանդողի լինգն ու բահը, բոլորովին չը մտածելով թէ նոր քաղաքը շինուած է հինի կողքին և ոչ թէ նորա աւերակների վրայ։ Բայց շուտով նաւթի հոտը բռնեց քթածակերս և ինձ յիշել տուեց, որ եթէ Բաքուն այլ ես գեբրների սրբազան քաղաքը չէ, նաև եւրոպական քաղաք էլ չէ նա։ Միներալական իւղի և նաւթային այս երկրում, փողոցները ջրելու համար չահեցնում են նաւթի ռաֆինադների մնացորդներն անգամ։ Հողը շուտով ասֆալտանում է. փողոցները, այդպէս ջրած և սրած, երբէք ոչ ցեխ և ոչ փոշի ունին, իսկ ինչ վերաբերում է հոտին—երևում է որ մարդս շատ շուտով սովորում է նրան։

Այդպէս էր առաջին տպաւորութիւնը մի քաղաքից, որի առաջին շինութիւնները ամենաշատը քառասուն տարի է, իսկ մեծագոյն մասը՝ հազիւ քսան տարեկան գոյութիւն ունին։ Grand-Hòtel հիւրանոցը, ուր ես վայր իջայ, թէև այնքան կոնֆորտով չէ որքան Պարիզի կամ Լոնդոնի մեծ հիւրանոցները, բայց և այնպէս բաւականին լաւ կահաւորուած էր, և, ընդհանուր առմամբ, ես գանգատուելու ոչինչ չունէի ոչ անկողնից և ոչ ճաշից։

Ապշերոնեան թերակղզու պատմութեան մէջ ամենանշանաւոր առանձնայատկութիւնը այն է, որ նա աշխարհքիս ամենահին կրօններից մէկի օրօրոցն էր. այդտեղ ծնուեց կրակի պաշտամունքը, Զրադաշտի (կամ Զօրոաստրի) Մազդէութիւնը—մազդեզանց կրօնը։ Հաւատացեալների ասելով, այն բոցերը, որ դուրս են բղխում գետնից, այրւում են ջրհեղեղից սկսած և կը հանգչեն միայն երբ աշխարհքիս վերջը կը լինի։ Ինչ և իցէ, հաստատ է, որ քսան ու հինգ կամ երեսուն դարերից դէս, Ապշերոնը և իւր կրակները հռչակուած էին հին ազգերի մէջ։ Սուրախանի տափաստանի նւիրատեղերը սրբազան տեղերն էին կրակապաշտների համար. այդտեղ էին կառուցել մոգերը իրանց տաճարները, որոնց այնքան շատ յաճախում էին մինչև փրկչական 12-երորդ դարը, այսինքն մինչև մահմեդականների արշաւանքների վերջը։

Արդէն 624 թւականին մազդէութիւնը մահացու հարուած էր ստացել. Բիւզանդիայի Հերակլէս կայսրը, որ Մուղանի անապատներում յաղթեց պարսիկներին, հեղեղեց Ապշերոնը, և Երուսաղեմի առման վրէժը հանեց քանդելով կրակատները։ Այդ անցքից տասներկու տարի յետոյ արաբները մտան Պարսկաստան, և, այդ օրից սկսած, մազդէութեան անվերադառնալի անկումը սկսուեց։ Սակայն, հաւատացեալների մի մասը ապաստան գտաւ Որմիզդ կղզու վրայ, և մի քանիսն էլ փախան մինչ Հնդկաստան, որտեղ նոքա բազմաթիւ մարդիկ իրանց կրօնի դարձրին։ Այդ նորադարձները պակաս եռանդոտ չէին, որպէս այդ ապացուցանում է պ. Նէյի միանգամայն ճշգրիտ պատմուածքը. 1856-ին, ասում է նա, պ. Բուրէ Ֆրանսիա-

կան դեսպան էր Պարսկաստանում. Թեհրանում սաստիկ խոլերա բռնկից։ Իսկոյն, սովորութեան համեմատ, բոլոր ունեւոր պարսիկները Թողին քաղաքը և գնացին դաշտերը ապաստանելու, 25—30 կիլոմետր հեռաւորութեամբ։ Ֆրանսիական դեսպանութիւնն էլ բնականապէս հետեւեց այդ օրինակին։

«Մի երեկոյ տեսան որ ֆրանսիական «բանակը» գալիս են երկու մարդ, պարսի չոր հագած, լղար, ճարթուռած, սաստիկ կիղուած արեղակից։ Նոցա հարց ու փորձ արին։ Նոքա պատմեցին թէ, երեք տարուց ղէս երկրպագելու համար որոնում են կրակի տաճարը, որի մասին դիտեն որ մի մեծ լճի մօտ է գտանւում։ Նոքա Թողել են Բոմբէյ այս ուխտաղնացութիւնը կատարելու համար։ Երկար ժամանակ նոքա հետեւել են ծովափին, յետոյ կորել էին Թուրում կամ հնդկական անապատում. նոքա անցել են Բելուջստանը, և այժմ չրջում են Պարսկաստանում, առանց ճանապարհը գտնել կարողանալու։ Սակայն, նոքա իմացան որ Թեհրանում կը գտնեն իրանց հաւատակիցներից ոմանց, և լաւ ունէին նոցանից տեղեկութիւն ստանալու... Մեր դեսպանը ուզեց նոցա պահել մի քանի օր նորից հարց ու փորձ անելու համար. բայց նոքա մերժեցին։ Մի քանի ժամ հանգստանալուց յետոյ, երկու դերբները (կրակապաշտներ) իրանց մահակը վեր առան և անյայտացան Կասպից ծովի ուղղութեամբ, ուր նոքա հաւաստիութիւն ունէին գտնելու Բաքուի այնքան ըղձացած տաճարը»։

Սուրխանի տաճարը, Բաքուից 15 վերստ հեռաւորութեամբ դէպի հիւսիս-արեւելք, մօտ երեսուն դար շարունակ դերբների Երուսաղէմն էր, և բոլոր ջանքը գործ էին դնում իրանց սուրբ երկիրը պաշտպանելու համար։ Յաջողութեան և անյաջողութեան բազմաթիւ փոփոխութիւններից յետոյ, նոքա տեսան այդ սրբատեղին աւերած ռուսաց կայսր Պետրոս Մեծի ձեռքով 1723-ին. 1735-ին նոքա, դերբները, կրկին հաստատեցին այդտեղ. բայց 1813-ին Գիւլիստանի դաշնը վերջնականապէս տուց այդ երկիրը Ռուսաստանին։ Դա՝ վերջին հարուածն էր, ուխտաւորները կամաց-կամաց անյայտացան, վերջին մոգը ինքն ևս 1850 թուականի մօտերքին հեռացաւ. և երբ ռուսաց ցարը 1888-ին այցելից Անդրկովկասը, հարկադրուած էին Հնդկաստանից բերել պարսերին բերել տալ որ մազդէական ծիսակատարութիւնների մի ներկայացումն տային։ Դերբ խօսքը դեռ ևս կայ. նորա ծագումը անյայտ է, բայց համեմատել են արաբական քէբիր (ուժեղ), փիւնիկական կաբարա և լունական կաբիրէ խօսքերի հետ։ Յայտնի է որ կաբիրական ստորերկրեայ աստուածները անսովոր հանդէսով պաշտում էին Սամոթրասի հրաբղխային կղզում և Հռովմում, միևնոյն ժամանակ, տեսնելով արեգակնապաշտային խորհուրդները, որ փոխ էին առնուած Պարսկաստանից։

Բաքուի հռչակի մի ուրիշ պատճառը հնումը նորա դիրքն էր Օքսուս գետաբերանի դիմաց։ Եւ իրօք, օքսուսը, որ այժմեայ Ամու-Դարիան է,

Ստրաբոն պատմաբանի օրերով Կասպից ծովն էր թափւում. VI րդ դարում այդ գետը սկսեց թափւել Օրալի լիճը. XVI-րդ դարում վերստին սկսեց ընթանալ իւր հին ուղղութեամբ, որից երկու դար յետոյ, XVI-րդ դարում մի վերջին անգամ ևս փոխեց ուղղութիւնը։ Բոլոր ճանապարհորդները համաձայն են, հին ուղղութեան վերայ գտնւած աւերակների մէջ տեսնել մնացորդներ բազմաթիւ քաղաքներից, որոնք առաջ ծաղկած էին, բայց կարծես մահի դատապարտւեցին գետի յանկարծակի չորանալով. և նոյն իսկ Բաքուն շատ վնասւեց այս փոփոխութիւններից։ Դէմ առ դէմ կանգնած լինելով այժմեանից արդէն անկենդան մի ծովափին, նա նւազ առ նւազ մեռնում էր, և չը լինէր նաւթի շահագործութիւնը, առանց Սամարկանդի երկաթուղուն, նա թերևս կրէր անդրկասպեան քաղաքների վիճակը։

Նաւթագործութիւն ուսումնասիրութիւնը առանձին տեղ է պահանջում. մենք կը յիշենք միայն նաւթի հին հռչակը աւանդութեան և պատմութեան յոյների մօտ։ Հերոդոտը յիշատակում է Ցակինթի (այժմ Ցանտէ), Պլինիոսը՝ Ագրիգենտի նաւթը Սիցիլիայում, Պլուտարքը՝ Էքբատանի և Բաբելոնի նաւթի աղբիւրները. Նոքա անւանում էին հանքային իւղը Պետրէլայոն, Լատիներէն՝ Պետրոլէում։ Ըստ աւանդութեան, Մեդէ նաւթով ծեփեց իւր հակառակորդուհի Կրէուզէի պատմուճանը՝ նորան այրել տալու համար հարսանեաց դիցուհի հիմէնէի ճրագալուսի հարևանութեամբ. որպէս յայտնի է, յուշկապարիկ Նեսոսը այդպէս վրէժխնդիր եղաւ Հերկուլէսին։ Ջրի մէջ վառւող կրակը անկասկած նաւթից էր։ Զարմանալու է որ նաւթը աւելի վաղ ժամանակներում չէ յիշատակւում, քանի որ Մեծն Ալեքսանդրը իւր առաջ վառել տւեց նաւթով ծեփւած մի խեղճ երեխայի և լուսաւորել տւեց Բաբելոն քաղաքը, այն օրը երբ նա հանդիսաւոր կերպով մտաւ քաղաքը, կրակել տալով նաւթի նրկու առուներ, որոնք շինւած էին զուգընթացաբար փողոցների երկայնութեամբ։ Վերջապէս հները գործ էին ածում նաւթը բռնակիր անասուններին քոսից բժշկելու համար։

Բայց և այնպէս, X-րդ դարուց առաջ խնդիր չկար Ապշերոնի աղբիւրների մասին։ Արաբները առաջիններն էին որ խօսացին Բաքէ՛ի (որ Բաքուի արաբական անունն է) աղբիւրների մասին, և երկու միմիանց ժամանակակից ճանապարհորդներ՝ Ռիկոլդ և Մարկօ-Պօլօ հաստատապէս ասում են թէ Բաքուի նաւթը կազմում է նշանաւոր առևտրի առարկայ Գիլանի, Մազանդարանի և ամբողջ Միջագետքի հետ մինչև Բաղդադ։ Բայց միայն անցեալ դարուցն է սկսւում Անդրկովկասեան նաւթի հռչակը. անգլիացի ճանապարհորդները, որոնք Հնդկաստանը տանող ճանապարհների յետևիցն էին ընկած, ամենամեծ հիացմունքով են խօսում նաւթի շահագործութեան մասին, որ այն ժամանակ կենդրոնացած էր Թերակղզու ծայրում գտնւած Սւեատոյ Կղզու վերայ։ Եւ իրօք, այնտեղ հեղուկը գալիս էր մինչ ծովի մակերևոյթը, և նաւերի բեռնաւորումը աւելի ճիշտ էր։ Սւեատոյ Կղզին տալիս էր միայն սև նաւթ, աւելի շատ թանձր որ

գործ էին ածում լուսաւորութեան և վառելիքի համար։ Ճանաչում էին նաև սպիտակ նաւթը, աւելի թեթև և աւելի մաքուր, որ շատ էին գործածում բժշկականութեան մէջ և որ շահագործում էին նոյն իսկ թերակղզու վերայ։ «Ռուսները, աւելացնում է Ջոնաս Հենուէյ (Jonas Hanway) 1754 թ-ին, խմում են նորան որպէս լիքեօր և զօրացնող միջոց. նա երբէք չի հարբեցնում։ Ներքին գործածութեան համար նա հիանալի միջոց է և վեներական հիւանդութիւնների դէմ, որ այնքան յաճախ են Կովկասում. որպէս արտաքին միջոց, նա շատ գործածական է սկորբուտի, յօդային կաթուածի և մկանունքների կծկութեան։ Այս դէպքում նորան պէտք է քսել միայն հիւանդ տեղերը, որովհետև անմիջապէս նա անցնում է արիւնը և պատճառում է կարճատև, բայց շատ սաստիկ ցաւեր։ Նա շատ լաւ է հանում կեղտը շորերից և շատ մեծ գործածութիւն կ'ունենար, եթէ դորանից յետ չը մնար զզւելի հոտ։ Հնդկաստանում նորանից հիանալի ջրգեղ (vernis) են ստանում...» Ահա արդարև նաւթի բաւական շատ գործածութիւնները արդէն XVIII-րդ դարու կէսից սկսած. այժմ բժշկականութիւնը աւելի էլ յաճախ է գործածում, և քիմիան նորանից ամենաթանկագին հիւթեր է դուրս բերել։ Աւելացնենք որ սև նաւթի և սպիտակ նաւթի մէջ բոլոր տարբերութիւնը որպիսութեան մէջն է։ Այժմ Սւեատոյ կղզին այլ ևս չի շահագործւում, և ոչ էլ Չէլէկէնի կղզին և անդրկասպեան աղբիւրները. Բաքուի գործարանատէրերը հազիւ բաւական են Ապշէրոնի հարստութիւնների համար։

Անգլիացի ճամբորդները, XVIII-րդ դարում, մեծ զարմացքով խօսում են նաև այն օգուտի մասին, որ քաղում են բնիկները այն վառւող գազերից, որոնք գոյանում են այդ զարմանալի թերակղզում։ Այդ նոյն ածխաթթւատներն են, որոնց մի ժամանակ պաշտում էին Զօրադաշտի գեբրները։ Մանաւանդ Սուրախանում, բաւական է մատով գետինը փորել, և արդէն բղխում է ածխաթթւատի գազ, որը վառւում է կրակին կամ լուցկին դիպչելով. որքան փորւածքը մեծ է, նոյնքան մեծ է և բոցը։ Տեղացիների խոհանոցը հէնց այդ կրակն ունէր, այդ տաքով տան մի անկիւնը պահւում էր որ գետինը փորեն, և, նայած դէպքին. օգտւում էին նորա կամ տաքութիւնից կամ լոյսից։ Լուսաւորութեան գործիքը մի խողովակ էր, որ մտցրւած էր գետնի մէջ և որը կարող էր նկատւել որպէս Բունզէնի rudiment du lee։ Նոյն իսկ մեր օրերով այդ գազերը ծառայում են նաւթի ռաֆինադի և կիրի գործարանական պատրաստութեան համար։ Այս վերջին գործողութիւնը շատ պարզ կերպով է կատարւում, գետինը փորում են մի կամ երկու մէտր (մէտրը հաւասար է թրքական գազի) խորութեամբ, փոսը ծածկում են կրաքարերով, որոնք այնպէս են դասւած լինում որ օդը միջով անցնի, և վառում են գազը. կրակի բոցը շատ ուժեղ է լինում և, մեծ քամու ժամանակ, կարող է հասնել երեք-չորս մետր բարձրութեան։

Չը պէտք է կարծել թէ գետնի այդ կազմութիւնը պատճառ է դառ-

նում հրդեհների լաճախութեան և վտանգաւորութեան. այդ կրակին տիրանալը շատ հեշտ է, մանաւանդ որ նորա տաքութիւնը համեմատաբար թոյլ է. և բնիկները գիտեն սովորական զգուշութիւնները բանեցնել՝ ամեն փորձանքից խոյս տալու համար։

Անգլիացիք, մանաւանդ Հնդկաստանը նուաճելուց յետ, չարունակ այցելում էին Կովկասը. 1821 թ-ին Իւլիլ (Uule) ճամբորդը, որ Ամուդարիայի աւազանը հետազօտեց, գնահատում էր Բաքուի նաւթաղբիւրների տարեկան արտադրութիւնը 4,000 տոնն (ռուսաց չափով՝ 250,000 պուդ), 1800 թ-ին այդ արտադրութիւնը 1500—2000 տոնն էր, որը մեծ քանակութիւն է, եթէ հաշուի առնելու լինենք դիստիլացիայի չը կատարելագործուած եղանակները և ճանապարհների վատութիւնը։ Իսկապէս նաւթը չէր թորւում (distillé), այլ միայն ֆիզիքապէս մաքրւում էր և զտւում ծովի ջրից, որը նաւթից թանձր է։ Հում նաւթը անցէին կացնում մի քանի աւազանների միջով, ծովի ջուրը նստում էր յատակում, և նաւթը բարձրանում էր վերև։ Պարզ է որ այդ եղանակով շատ նաւթ էր կորչում և նաւթի մաքրելը շատ դանդաղ էր կատարւում։ Բացի դրանից, նաւթը, անախորժ հոտը չորերի առարկաներից երկար ժամանակ չէր անցնում։

Բաքուի կարեորութիւնը, Պարսկաստանի հետ ունեցած առևտրի տեսակէտից, միշտ մեծ է եղել, այսօր չոդենաւերը չաբաթը մի քանի անգամ գնում են Բաքուից Էնզելի, որտեղից ապրանքները ուղարկւում են Թեհրան Ղազբինի վրայով։ Նամակները չորս օրում բերւում են Թեհրանից Ղազբին, նոյնքան էլ պահանջւում է Ղազբինից մինչ Ռէշտ, և 24 ժամ էլ՝ Ռէշտից Բաքու։ Այս ժամանակը շատ կը կրճատուի, երբ չինուած կը լինի երկաթուղին Հաջի-Կաբուլից մինչ Թէհրան, ճիւղաւորութեամբ դէպի Ռէշտ. ճանապարհորդը աղատութիւն կ'ունենայ լեռ դառնալ անցնելով Անդրկասպեան երկաթուղին Սախաբադի վրայով մինչ Ուղուն-Աղա, որը երկաթուղու գծի գլուխն է Կասպից ծովի կողմից։

Երկաթուղիներ Թուրքմէնների անապատներում և Դէռվկի թագաւորութեան մէջ! ինչ գեղեցիկ երազներ են դոքա ապագայի համար! Բայց այդ երազները պրոյէկտներ են և այդ ապագան միանգամայն մօտ է՝ դարուս վերջանալուց առաջ, Բաքուն նորից ձեռք բերած կը լինի իւր անցեալի ամբողջ բարգաւաճութիւնը, ապահովւած լինելով որ կենդրոն կը լինի կենդրոնական Ասիայի առևտրի ազատելով ամեն հոգսից այս կամ այն անապատային գետի հոսանքի մասին. հաստատ հիմքերի վերայ կառուցուած երկաթուղին այդ անապատելի փոփոխութիւններին ևս ենթակայ չէ։

Բայց եթէ առևտուրը օգտւում է այս նոր ճանապարհներից, ռազմագիտութիւնը. որ նոցա չինել է աւել, մի բոլորովին այլ տեսակի շահ է գտնում։ Մենք, որ այս պարզ պատմածքի մէջ ուզում ենք հեռու կենալ ամեն քաղաքական վիճաբանութիւններից, առաջ կը բերենք եզրակացութիւնները պ. Մարինի, որի հեղինակութիւնը կենդրոնական Ասիայի

վերաբերեալ բոլոր զինուորական և քաղաքական հարցերում անվիճելի է ճանաչուած Անգլիայում։

«Բաքուն է լինելու, ասում է նա, հիմքը բոլոր ապագայ արշաւանքների կենդրոնական Ասիայում, այնտեղից են ուղարկում զօրքերը և պատերազմական մթերքները Ախալի և Մերւի դարնիզոնները։ Կրասնօվոդսկը, Կասպից ծովի արեւելեան ափի վերայ, միայն մի կայարան է ճանապարհի վերայ։ Մի պատերազմի ժամանակ Բաքուն է լինելու կենդրոնը զօրքի, մթերքներ հասցնելու համար։

«Վաճառականական տեսակէտից, քանի որ բոլոր առևտրական ճանապարհները ծովն են որոնում, Կասպից ծովը բնական վաճառատեղին է Միր-Դարիայի, Ամու-Դարիայի պրովինցիաների և Պարսկաստանի հիւսիսային մասի։ Նորա նաւահանգիստը, որը մի ծոցի խորքումն է և լաւ պաշտպանուած է հիւսիսային քամիներից և 9 կիլոմետր լայնութիւն ունի, ամեն կողմից հիանալի է։ Բաքուն է նաև որ անդրկովկասեան երկաթուղուց ամենամեծ շահն է ստանում. նորա աղդաբնակութիւնը որ 12,000 էր 1870 թ-ին, 15,000 էր 1879-ին և 50,000 էր 1883 ին, այժմ հասնում է 100,000 հոգու, և դեռ ամեն օր էլ աճում է. ծովային առևտրական շարժումը այժմեանից արդէն աւելի մեծ է քան Օդեսայինը և Բալթեան ծովի ռուսց նաւահանգիստներինը։ Այդ զարմանալի բարգաւաճումը լաւ զգացւում է երբ անցնում էք նաւահանգիստի նոր ծովափերը, որոնք լիքն են ապրանքներով և գործիքներով՝ նաւերը լիտ բեռնաւորելու համար. դգում էք որ այդ հարստութիւնը հաստատ է և որ այդ առատութիւնը նախադուշակում է մի աւելի ևս մեծ առատութիւն, հասկանում էք որ Բաքուն է Ասիայի emporium-ը, երբ ամեն քայլափոխում հանդիպում էք Խորասանի բուրդը և մետաքսը, պարսկական և Թուրքմէնական գորգեր, Խոկանդի և Սամարղանդի հրաշալի ապրեշումներէնը, և ամեն անսակ ներկագործական բոյսեր, դեղին ցորեն, ինդիգo, զիստոտ, չը խօսած Սեբզաւասի հռչակուած ափիոնի մասին։ Ճիշդ է, Բաքուն, նման Բաթումին, շատ վնասուեց տրանզիտ առևտրի վերացնելով, բայց Ասիային պէտք է Բաքուն, որը չի վախենում ունենալ, իբր հակառակորդ, մի երկրորդ Տրապիզոն։

Ամեն ինչ ուրեմն դէպի լաւն է. անցեալը խրախուսիչ է, ներկայ փայլուն, ապագան՝ չլացնող։ Միայն թէ, ինչպէս չկայ երկինք առանց ամպի, Բաքուի բարգաւաճումը լարուցեց զարհուրելի և վտանգաւոր նախանձներ։ Մի միաձայնութեամբ պատիւ է բերում իրանց և որ դողալ է տալիս ռուս վաճառականներին, անգլիացիք պատերազմի մէջ մտան իրանց կապիտալներով՝ Պարսկաստանը ֆինանսական նուաճելու համար։

Հակառակ ֆրանսիացիներին, որոնք լիտ են կանգնում կենդրոնական Ասիայից այս պատրւակով թէ նոքա այնտեղ հասարակաց խնդիր չունին, նոցա հարևանները Լամանշի միւս կողմում, անգլիացիք՝ բաղմացնում են

առևտրական ձեռնարկութիւնները, հասարակաց մեծ շինութիւնները, ճանապարհները և ջրանցքները. նոքա ունին նաւագնացութեան մենիրաւունքը Կարունի վերայ (որ Շատ-էլ-Արաբի մէջն է թափւում), ուրեմն և ունին խապանի առևտրի մենիրաւունքը. նոքա կազմակերպում են Jmperial Bank of Persia, (Պարսկաստանի կայսերական բանկ), որը իւր ճիւղաւորութիւնները տարածում է ամբողջ Պարսկաստանի վերայ. մի խօսքով, նոքա ամրանում են Օսմանի ծովի և Պարսից ծովի ափերի վերայ, որ ապահով յաջողութեամբ դիմեն Մազանդարանի վերայով Կասպից ծովի նաւամանը։

Նապոլէօնը, որի հրաշք գործունէութիւնը և ընդարձակ հանճարը յայտնի են, իւր տիրապետական ձգտումները չէր սահմանափակում միայն Եւրոպայով. Հնդկաստանի դէմ անելիք արշաւանքի գաղափարը նորան միշտ զբաղեցնում էր։ 1807 թ-ին, Լեհաստանի և Պրուսիայի արշաւանքների հոգսերով զբաղուած ժամանակ, նա ուղարկեց Պարսկաստան մի դիպլոմատիական և զինուորական դեսպանութիւն, որի գլուխ նշանակեց գեներալ Գարդան'ին։

Նոյն ինքն Նապոլէօնից աւելի համարձակ պ. Մարբինը հարց է դնում, թէ ինչու անգլիացիք չը պէտք է մասնակից լինեն նաւթի տրանսպորտի և Կասպից ծովի նաւագնացութեան մէջ, որ այժմ մասնաւորների կամ ռուսաց «Կովկաս և Մերկուրի» Ընկերութեան ձեռքումն է։ Անգլիացիք առաջինն էին որ հետազօտեցին Կասպից ծովը. ուրեմն նոքա պէտք է և նորա հարստութիւնների տէրը լինեն։ Օտարօտի, անշուշտ, բայց վերին աստիճանի բրիտանական եղրակացութիւն։ Բայց Մարբինը ուրիշ հոգսեր ունի այդտեղ. ռուսաց պատերազմական նաւատորմիղը Բաքուի նաւահանգքան ու չորս ժամում կարող կը լինի առանց աղմուկի ամբողջ բեգիմենտներ փոխադրել Մազանդարան՝ Պարսից ծոցի ճանապարհի վերայ։ «Այդ, ասում է նա, անգլիական դիպլոմատների յամառ տխմարութիւնն է (persistent imbecility) կարծել, թէ Պարսկաստանը ընդունակ է ընդդիմադրութեան». մի զօրագունդ առանց արգելքի կարող էր նորա մի ծայրից միւսը անցնել. ինչ կը լինի, ասում է նա, երբ պ. Եոգէլի նախագծած երկաթուղին կը կապէ Կասպից ծովը Պարսից ծոցի հետ? Այդ ճանապարհը, 1,100—1,200 կիլոմետր (մօտ նոյնքան վերստ), որ աւելի կարճ է քան քարաւանների ճանապարհը Ռէշտից մինչ Բուշիր (1,600 կիլոմետր). Երևանից սկսելով՝ կ'անցնի Արաքսի հովիտը մինչ Լենքորան Կասպից ծովի վերայ, դէպ հարաւ. այն ժամանակ ռուսաց ազդեցութիւնը կը տարածվի Կասպից ծովի վերայ բոլոր կողմերից։ Այս բոլորը ասելով, Մարբինը ի նկատի ունի Պարսկաստանը իւր 7 միլիոն բնակիչներով, որոնք չեն ցոյց տալիս ոչ կենսունակութիւն և ոչ ազատութեան սէր։

Մինչ այդ՝ Ռուսաստանը առանց աղմուկի, բայց արագ իւր ձեռքն է դցում ամբողջ Պարսկաստանի առուտուրը՝ ռուս վաճառականները դեռ

չեն կարող մրցել իրանց հակառակորդ գերմանացի, աւստրիացի և ֆրանսիացիների հետ, բայց թերևս ժամանակը հեռու չէ, երբ սոքա կը տեսնեն հողը իրանց ոտի տակից խլուած։ Պարսկաստանը արտահանում է Ռուսաստան իւր արդիւնքների մեծագոյն մասը. Նիժնի-Նովգորոդի տօնավաճառին և պարսկական ապրանքների գինը ամեն տարի լինում է 15 միլիոնի չափ։

Այդ Վոլգան է և միջադետային ջրանցքներն են որ այդ աստիճան նպաստում են առևտրական յարաբերութիւններին Ռուսաստանի և Պարսկաստանի մէջ. նաւերը գնում են Ռէշտից մինչ Պետերբուրգ Կասպից ծովով, Վոլգայով մինչև Ռիբինսկ և ջրանցքներով Ռիբինսկից մինչ Նէւա նաւերով, որոնք կարող են տանել 400—500 տոնն (30,000 պուդից աւելի)։ Այդ գետային ճանապարհի առևտրական մեծ կարևորութիւնը անվիճելի է՝ Վոլգայի վերայ տարին կատարւում է փոխադրութիւն 11 միլիոն տոննի (ուրեմն մինչ 700 միլիոն պուդ). ամենաչատը լինում է Նիժնի տօնավաճառի ժամանակ, որի հռչակը համաշխարհային է։ Եւ ահա Մարիինին երազ է գալիս թէ Հնդկաստանի իւր հայրենակիցները, որ չը հաշուած կանանց և երեխաներին, թւով 150,000 տղամարդ են, որպէս ոչ հաստատուած, այլ բանակ գրած ժամանակաւորներ, հեռու իրանց մայր-հայրենիքից ահռելի հարևանից։ Նա կարծում է թէ ապրում է այն ժամանակներում, երբ մի 5—6 կոնտորներ կը ներկայացնեն կործանուած կայսերութեան մնացորդը, որպէս այժմ ֆրանսիական Պոնդիշէրին և Կարակալը (Հնդկաստանի արևելեան ափում) լիշեցնում են Դիպլէքսի լայողութիւնները։ Եւ Մերը, դառնալով մի երկրորդ Բաքու, և ունենալով 500,000 բնակիչ, կը միացնի ռուսացած Հնդկաստանը Եւրոպայի և Ասիայի Ռուսիաների հետ!...

(Կը շարունակւի)